

**ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ  
ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ԶԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ**

Շարահյուսությունն, իբրև առանձին գիտակարգ, առավել մեծ թափով զարգացավ հատկապես 20-րդ դարի սկզբներին: Շարահյուսության ուսումնասիրության հիմնական առարկան քննվող երկու լեզուներում հայերենում և ֆրանսերենում, բառակապակցությունն է և նախադասությունը: Միայն թե ֆրանսերենում նախադասություն ասվածը երկարժեք է պարզ նախադասություն (proposition) և բարդ, մեկից ավել պարզ նախադասություններից կազմված նախադասություն (phrase):

Այսպես 20-րդ դարի սկզբներին ինչպես կառուցվածքային լեզվաբանության, այնպես էլ ավանդական քերականության ներկայացուցիչները նախադասության հիմքում դնում էին բառից առավել մեծ միավորի բացահայտման խնդիրը: Այդպիսի վերլուծության օրինակներ են թե Յոն Ռիսի բառախմբերը, թե՛ Սոսյուրի արտաքին շարույթի ուսմունքը և այլն:

Իհարկե, պետք չէ կարծել, թե ամեն ինչ շատ հարթ էր ընթանում: Տարակարծություններն ու դժգոհություններն էլ ավելի սրվեցին 20-րդ դարի սկզբին: Լեզվաբանական առանձին դպրոցներ տարբեր դիրքորոշումներ ունեին: Դեռ հոգեբանական դպրոցի ներկայացուցիչների մոտ նկատվեց նախադասության անդամների ուսմունքի քննադատությունը: Երիտքերականների մոտ այն փոխարինվեց բառախմբերի և բառակապակցությունների միակողմանի ուսմունքով: Հոգեբանական ուղղությունը գտնում էր, որ նախադասությունը կազմված է հոգեբանական ենթակայից և հոգեբանական ստորոգյալից: Նրանք ընդգծում էին նախադասության հոգեբանական կողմը անտեսելով ձևաբանականը: Լեզվաբանական այս դպրոցի ներկայացուցիչների կարծիքով ենթական մտքի մեկնակետն է, իսկ ստորոգյալը՝ ավարտը: Տեսության համաձայն՝ «քերականությունը զոյություն ունի մտքերին ձև տալու համար միայն»:

Կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչները նախադասությունը դիտում էին որպես ստորադասական հարաբերությամբ կապակցված միավորների մի ամբողջություն: Լեզվաբանների մի մասը այդ ամբողջության մեջ մեկ անկախ բաղադրիչ էր առանձնացնում ստորոգյալը, մյուսները հավելում էին նաև ենթական:

Մի շարք լեզվաբաններ միևնույն հարթության վրա չէին դիտարկում նախադասության զլխավոր և երկրորդական անդամները: Ինչ վերաբերում է ռուս լեզվաբանական դպրոցին, ապա նրանց ակադեմիական քերականության մեջ նախադասության երկրորդական անդամների մասին տեսությունը ներառված չէր: Վ. Ա. Կոչերգինան գտնում էր, որ նախադասությունը բաղկացած է ենթակայից, ստորոգյալից և որոշարկիչներից (դետերմինանտներից): Այս դրույթի հիմքում ընկած է այն, որ «նախադասության զլխավոր անդամները սահմանվում են մտածողության պրոցեսի հիման վրա, իսկ երկրորդականները իրականության հատվածավորման արտացոլումներով»:

Ունանք նախադասության մեջ առանձնացնում էին զլխավոր, երկրորդական և ուղեկցող կամ մեկուսացած անդամներ: Որոշ լեզվաբաններ լրացումները դիտարկում էին ենթակայի կամ ստորոգյալի խմբում իբրև բառակապակցության մի բաղադրիչ:

Ինչ վերաբերում է հայ լեզվաբանությանը, ապա այն խորհրդային լեզվաբանության մասը կազմելով գտնվում էր ռուսական լեզվաբանության անմիջական ազդեցության տակ: Եվ արդեն 20-րդ դարի 60-ական թթ. նախադասության՝ բառից ավելի մեծ միավորի վերլուծության փորձեր կատարեցին նաև խորհրդային լեզվաբանները:

Այսպիսով՝ նախադասության տրոհված անդամների ուսմունքը հայ քերականագիտության մեջ արմատավորելու գործում անժխտելի է ռուս քերականագիտության ազդեցությունը: 1945 թ. լույս ընծայած մի հոդվածում Ա. Ղարիբջանը առաջին անգամ հարց բարձրացրեց հայ քերականության մեջ տրոհված լրացումների արժեքավորման մասին: Յետևելով իր պահանջին՝ 1947 թ. լույս տեսած «Ֆայոց լեզվի մեթոդիկա» աշխատության մեջ առաջին անգամ քննել է տրոհված լրացումների դրսևորումները ժամանակակից հայերենում:

Թեև շարահյուսությունը համեմատաբար առավել երիտասարդ գիտակարգ է, սակայն վերջինիս ուսումնասիրության առարկան՝ նախադասության, նրա մասը հանդիսացող անդամների ու նրանց մեջ գործող հարաբերությունների ստերեոտիպը, եղել է նաև հնդեվրոպական նախալեզվում:

Ենթակայի և ստորոգյալի կապակցությունը բավական է եղել նախադասություն ունենալու համար, սակայն մտքի լիարժեք արտահայտման համար միայն ստորոգելիական կառույցը չի բավականացրել: Մտքի ամբողջականությունն ապահովելու համար հնդեվրոպական նախալեզվում նույնպես երկրորդական լրացումներ են գործածվել, որոնք մի դեպքում լրացրել են ստորոգյալին, մյուս դեպքում՝ ենթակային, իսկ երբեմն նաև նրանց լրացումներին: Յնդեվրոպական լեզուներում այդ բառերը միմյանց հետ կապակցվում են խնդրառությամբ, համաձայնությամբ և առդրությամբ: Քերականական այս ձևերի նշանակությունն ու առանձնահատկությունները ցույց են տալիս, որ դրանք գոյություն են ունեցել նաև մայր լեզվում:

Յնդեվրոպական նախալեզվում բոլոր բառերը, բացառությամբ դրանք միմյանց հետ կապակցող մասնիկների, ինքնուրույն նշանակություն են ունեցել: Եվ ինչպես նշում է Մեյեն, «բառի ինքնուրույնությունն էլ այն հիմնական սկզբունքն է, որով որոշվում է հնդեվրոպական նախադասության կառուցվածքը»<sup>2</sup>:

Նախադասության կազմի մեջ մտնող բառերը՝ լրացումները, տարբերակելու համար անհրաժեշտ է դրանք առանձնացնել ըստ իրենց արտահայտած իմաստային հարաբերությունների. ժամանակակից քերականները նախադասության տարաբնույթ անդամներ են առանձնացնում, սակայն դրանց հիմքում հիմնականում ընկած են երեք հարաբերություններ՝ խնդրառական, պարագայական և որոշչային: Առաջին երկուսը լրացնում են նախադասության ստորոգյալին, իսկ երրորդը, որը համապատասխանում է հայերենի գոյականական անդամի լրացումներին, հանդիսանում է ենթակայի կամ գոյականով արտահայտված նախադասության մեկ այլ անդամի լրացում:

Նախադասության մեջ գործածվելիս գոյականական անունը կամ նրա փոխարժեքը հաճախ հանդես է գալիս բառային որոշակի խմբով՝ «մի շարք բաների ուղեկցությամբ», որոնք առավել ճշգրտում են նրա արտահայտած առարկան, երևույթը, հարաբերությունները, բացահայտում այն, որոշակիացնում, նոր նրբերանգներ հաղորդում վերջինիս: Ըստ այդմ էլ նախադասության մեջ առանձնանում է գոյականական շարույթը՝ որպես շարահյուսական մեկ միավոր: Գոյականական շարույթում գործում են կապակցական որոշակի առանձնահատկություններ և տարբերություններ, որոնք էլ հիմք են ծառայել գոյականական անդամի լրացումների արդի տարբերակման համար:

Թե հայերենում և թե ֆրանսերենում կա «գոյականական անդամի լրացում» հասկացությունը, սակայն երկու լեզուներում էլ տարբեր են դրանց բնորոշման հիմքերը, դրսևորման առանձնահատկությունները և սահմանները:

Գոյականական շարույթը՝ իբրև նախադասության շարահյուսական միավոր, ինչպես արդեն նշեցինք, բնորոշ է եղել նաև հնդեվրոպական նախալեզվին: Ժան Օդրին գոյականական շարույթում կապակցման մի քանի հնարավոր տարբերակում է դիտարկում. գոյականին կարող է լրացնել նրա հետ սեռով ու թվով համաձայնեցված ածականը, գոյական-բացահայտիչը կամ սեռական, տրական և գործիական հոլովներով դրված լրացումը՝ ցույց տալու համար պատկանելություն, հասցեագրում (ուղղվածություն, նաև նպատակաուղղվածություն) և ստացականություն<sup>3</sup>:

Հնդեվրոպական նախալեզվում գոյականական շարույթի միավորների արտահայտած հարաբերություններն այսօր էլ առկա են համեմատվող երկու լեզուներում, սակայն տարբեր են դրանց արտահայտման ձևերը: Օրինակ՝

*Գեղեցիկ աղջիկներ – de belles filles:*

*Մարին՝ նրա քույրը, բժիշկ է: – Marie, sa sœur, est médecin:*

*Արամի մայրը – la mère d'Aram:*

*Գրելու թղթեր – des papiers à écrire:*

*Ուժեղ բնավորությամբ մարդ – un homme de grand caractère:*

Ինչպես հնդեվրոպական նախալեզվում, այնպես էլ *գեղեցիկ աղջիկներ (de belles filles)* օրինակում *աղջիկներ (filles)* գոյականին լրացրել է *գեղեցիկ (de belles)* ածականը: Այն նոր տեղեկություն է հաղորդում լրացյալի մասին՝ ցույց է տալիս վերջինիս «գեղեցիկ լինելու» հատկանիշը: Թեև հայերենում ածականը համաձայնեցված չէ լրացյալ գոյականի հետ, քանի որ ժամանակակից հայերենը կորցրել է սեռի քերականական կարգը, ածականը հոգնակի թիվ ստանում և հոլովվում է միայն գոյականաբար գործածվելիս, սակայն եթե հաշվի առնենք այն համագամանքը, որ համաձայնեցումը համեմատաբար նոր երևույթ է հնդեվրոպական նախալեզվում<sup>4</sup>, ապա կարելի է ասել, որ «հատկանիշ ցույց տվող բառ՝ ածական + գոյական» գոյականական շարույթը գոյություն ունի ֆրանսերենում և հայերենում: Ընդ որում, նախալեզվի՝ իրեն համապատասխան միավորին նույնանում է թե արտահայտած հարաբերությամբ և թե արտահայտության պլանում:

*Մարին՝ նրա քույրը, բժիշկ է (Marie, sa sœur, est médecin)* օրինակում նույնպես պահպանված է հնդեվրոպական նախալեզվի համապատասխան միավորի արտահայտած հարաբերությունն ու արտահայտման ձևը: Նմանատիպ հա-

րաբերություն արտահայտող լրացում–լրացյալ հարաբերությունը երկու լեզուներում էլ ստացել է *բացահայտիչ–բացահայտյալ* անվանումը:

Արամի մայրը (*la mère d'Aram*), գրելու թղթեր (*des papiers à écrire*), ուժեղ բնավորությամբ մարդ (*un homme de grand caractere*) օրինակները իրենց արտահայտած հարաբերություններով տարբերակման հարցում ֆրանսերենում մինևույն հորիզոնականի վրա են դրվում՝ նույնանալով որպես հատկանիշ արտահայտող հարաբերություններ՝ դրանով իսկ նույնանալով նաև *գեղեցիկ աղջիկներ* (*de belles filles*) օրինակի հետ:

Ի տարբերություն ֆրանսերենի հայերենը հատկանիշ արտահայտող տարբեր հարաբերություններից առանձնացնում է պատկանելություն, սերում, ծագում արտահայտող հարաբերությունը (հայերենում այն դիտվում է որպես գոյականական անդամի առանձին լրացում՝ հատկացուցիչ): Տրական<sup>6</sup> և գործիական հոլովներով դրված լրացումները հայերենում ընդհանրաճանաչ են հատկանիշ արտահայտող ածականական լրացման հետ: Այս խումբը հայերենը կոչում է *որոշիչ*: Հարկ է նշել, որ նմանատիպ բաժանման հիմքում ընկած է նաև լրացման արտահայտման ձևը: Այսպես, ընդհանուր կանոնով՝ հայերենում հատկացուցիչը դրվում է սեռական հոլովով, այսինքն, եթե նույնիսկ լրացումը պատկանելություն արտահայտի, սակայն դրված չլինի սեռական հոլովով, այն այլևս չի կարող հատկացուցիչ համարվել:

Չմռան մի օր (*un jour d'hiver*) և ձմեռային մի օր (*un jour hivernal*) կապակցությունները արտահայտած իմաստային հարաբերության տեսանկյունից հավասարազոր են, նույնիսկ անհնարին է տարբերակման համար որոշակի ոճական նրբերանգներ առանձնացնել: Այդ նույնականությունը շեշտում են նաև օրինակների ֆրանսերեն թարգմանությունները: Ֆրանսերենում *d'hiver* և *hivernal* լրացումները որոշիչներ են, մինչդեռ հայերենում *ձմռան* հատկացուցիչ է, իսկ *ձմեռային*՝ որոշիչ:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է նշել, որ հնդեվրոպական նախալեզվի գոյականական շարույթն ու նրա՝ իր ներսում արտահայտած կապակցման ու իմաստային հարաբերությունները այսօր առկա են նաև հայերենում և ֆրանսերենում:

Սակայն նախադասության շարահյուսական վերլուծության և, առավել ևս, երկրորդական անդամների առանձնացման հարցում լեզուներում տարբեր մոտեցումներ են գործում: Հայերենի դասական քերականությունը գոյականին «լրացնող բառերը» բաժանում է երեք խմբի՝ որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, որոնց ծանոթացանք վերևում:

Ֆրանսերենի ժամանակակից քերականությունը հեռացել է նախադասության անդամների առանձնացման դասական մոտեցումներից:

*Complément* (լրացում) եզրը համեմատաբար ուշ է մտել կիրառության մեջ: Հին քերականները գործածում էին *regime* (խնդրառական լրացում, խնդիր) եզրը՝ նկատի ունենալով «այն ձևը», որը պետք է ընդուներ բառի քերականական լրացումը<sup>7</sup>: Եվ միայն ֆրանսերենի հոլովների անհետացումից հետո 18–րդ դարի 50–ական թվականներին, քերականները սկսեցին գործածել *complément* (լրացում) հասկացությունը, «որն ավելանում է բառին նրա նշանակությունը որոշակիացնելու համար»: Չնաբանական որոշակի ճշգրտումներից հետո այս ըմբռնումը հետագայում հիմք ծառայեց զպրոցական քերականության համար:

Լ. Տենյերը նախադասության կենտրոնը համարում է ստորոգյալը, որից հետո առանձնացնում է վերջինիս լրացումներին՝ գործողության մասնակիցներին՝ ակտանտներին – actant<sup>2</sup>: Ըստ Տենյերի՝ նախադասության ակտանտներն են՝ ենթական, ուղիղ և անուղղակի խնդիրները: Բայի արտահայտած գործողության ժամանակը, տեղը, ձևը և մյուս հատկանիշները ցույց տվող բառերը Տենյերը կոչում է պարագա (circonstant): Լեզվաբանը նշում է, որ որպես պարագա (circonstant) հանդես են գալիս մակբայները, իսկ ակտանտ կարող է լինել գոյականը կամ նրա համարժեքը: Եվ քանի որ յուրաքանչյուր ակտանտ որոշակի համատեքստում հանդես է գալիս որոշակի բառախմբով՝ նրա արտահայտած իմաստն առավել որոշակի դարձնելու համար, նշանակում է՝ ստանում է լրացումներ: Այս առումով կարելի է նկատել, որ ակտանտների լրացումները համապատասխանում են հայերենի գոյականական անդամի լրացումներին: Եվ եթե հիմք ընդունենք Տենյերի տեսությունը, կարող ենք ասել, որ խնդիրների, պարագաների, առավել ևս ենթակայի համեմատությամբ, գոյականական անդամի լրացումներն առավել երկրորդական լրացումներ են՝ լրացման լրացումներ:

Գոյականական ակտանտն իր լրացումների հետ միասին կազմում է գոյականական խումբը (groupe du nom), որը ժամանակակից ֆրանսերենում ընդունված է դիտարկել որպես նախադասության շարահյուսական միավոր:

Ս. Գրևիսը նշում է, որ գոյականը, ստորոգելիական վերադիրը, խնդիրն ու պարագան նախադասության մեջ կարող են հանդես գալ մեկ բառով<sup>3</sup>:

Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ միևնույն հորիզոնականի վրա են դրվում խոսքի մասն ու շարահյուսական պաշտոնը: Գրևիսը նույնպես գոյականական անդամի լրացումները չի առանձնացնում որպես առանձին շարահյուսական միավոր, համեմայն դեպս, դրանք մյուս լրացումների հետ՝ պարագա, խնդիր, միևնույն հորիզոնականին չի դնում:

*Maman nous aide.* – Մայրիկն օգնում է մեզ:

*Elle est pianiste.* – Նա դաշնակահարուհի է:

*Nina aide Pierre.* – Նինան օգնում է Պիեռին:

*Je suis libre aujourd'hui.* – Ես ազատ եմ այսօր:

«Բայց հաճախ գոյականը, դերանունը, որակական ածականը, մակբայը, որոնք հանդես են գալիս որպես ենթակա, ստորոգելիական վերադիր, բայի լրացում, ուղեկցվում են որևէ բառով կամ բառախմբով՝ լրացնելու նրա իմաստը կամ այն առավել որոշակի դարձնելու համար», – գրում է Ս. Գրևիսը:

*Notre maman nous aide.* – Մեր մայրիկն օգնում է մեզ:

*Elle est une pianiste très connue.* – Նա շատ հայտնի դաշնակահարուհի է:

*Nina aide son frère, Pierre.* – Նինան օգնում է իր եղբորը՝ Պիեռին:

*Je suis libre aujourd'hui, le matin.* – Ես ազատ եմ այսօր առավոտյան:

Այս դեպքում քերականական ենթական (maman – մայրիկը) կարելի է տարբերել տրամաբանական ենթակայից (notre maman – մեր մայրիկը), առաջինը այն բանն է, որը կատարում է գործողությունը, երկրորդը՝ քերականական ենթական իրեն լրացնող բառախմբի հետ միասին: Ս. Գրևիսն այս կերպ առանձնացնում է «groupe du sujet»-ն (ենթակայի խումբ), նման ձևով նաև՝ «groupe de l'attribut» (վերադրի խումբ), «groupe du complément d'objet» (խնդրի խումբ):

Եթե նախադասության անդամների բաժանման հարցում Գրևիսի նման հիմք ընդունենք տրամաբանական այս խմբերը, ապա «գոյականական անդամի լրացում» հասկացությունը պետք է բացառել ֆրանսերենից: Եվ ինչպես Տենյերի մոտ, նախադասության մեջ կունենանք միջուկը՝ ստորոգյալը, և ակտանտներն ու պարագաները: Տենյերի նման, Գրևիսը շարունակում է նախադասության անդամների վերլուծությունը՝ «քանդելով տրամաբանական ենթակայի կամ խնդրի կփիկը՝ խումբը», սակայն լեզվաբանը շարահյուսական մակարդակից անմիջապես անցնում է ծնաբանական՝ խոսքիմասային մակարդակի. «*groupe du sujet*», «*groupe de l'attribut*», «*groupe du complement d'objet*» շարահյուսական միավորների առանձնացմանը հետևում է դրանց վերլուծությունը խոսքիմասային պատկանելության տեսանկյունից՝ *groupe du nom* (գոյականական խումբ), *groupe du pronom* (դերանվանական խումբ), *groupe de l'adjectif qualificatif* (որակական ածականի խումբ), *groupe de l'adverbe* (մակբայական խումբ): Այս անցումը նույնիսկ չի հիմնավորվում:

Այսպիսով նախադասության տրամաբանական շարահյուսական խմբերը առանձնացնելուց հետո դրանք առանձնացվում են ըստ խոսքիմասային խմբերի՝ ելնելով այն հանգամանքից, թե որ խոսքի մասին է պատկանում խմբի՝ շարույթի գլխավոր անդամը (գոյականական, ածականական և այլն): Ա. Գրևիսն այնուհետև կատարում է խմբի անդամ բառերի շարահյուսական և ծնաբանական վերլուծություն: Իսկ վերլուծության այս փուլում ի հայտ են գալիս դասական քերականությանը հատուկ գոյականական անդամի լրացումները:

Ա. Գրևիսը «*Le groupe du nom*» ենթավերնագրում ներկայացնում է այն հնարավոր միավորները, որոնք գոյականական խմբի մասն են կազմում՝ լրացնելով գլխավոր անդամին: Այդ միավորների թվում նա առանձնացնում է վեց խումբ՝

1. **article (հոդեր),**

*une table, du fromage, la fille,*

2. **adjectives qualificatifs (որակական ածականներ),**

այս խմբում լեզվաբանը առանձին ենթախմբեր է դիտարկում՝

ա. ածականական կիրառություն ունեցող հարակատար դերբայը (*le participe passé*) և բայական ածականը (*l'adjectif verbal*).

*Un homme connu, une nouvelle étonnante,*

բ. գոյականին լրացնող որակական ածական (*adjectives qualificatifs*), որ Գրևիսը կոչել է *epithete* (որոշիչ).

*Une grande maison, de petites tables,*

գ. **Adjectif detache կամ adjectif en apposition.**

Այս լրացումը համապատասխանում է հայերենի տրոիվող որոշիչին: Ըստ Մորիսի՝ այն *épihète*-ից տարբերվում է նրանով, որ իր դիրքով հետանում է լրացյալից: Ի դեպ հետադաս *épihète*-ը նույնպես այս խմբին է դասվում:

*Sa mère, heureuse de joie, riait sans cesse.* – Նրա մայրը, ուրախությունից երջանկացած, անվերջ ծիծաղում էր.

3. **Adjectif déterminatif (որոշչական ածականներ).**

Այս խմբում ընդգրկված են թվական անունները և դերանվանական ածականները.

*deux lampes, cette femme, certains étudiants*

## 4. Ածականական կիրառություն ունեցող մակբայով.

*Une course vite – արագ վազք*

## 5. Apposition (բացահայտիչ)

*Paris, la capitale de la France, est appelee centre de la mode. – Փարիզը՝ Ֆրանսիայի մայրաքաղաքը, կոչում են նորաձևության կենտրոն:*

6. Complement determinatif<sup>2</sup>, որը գոյական է, դերանուն, անորոշ դերբայ, մակբայ, որ գոյականին լրացնում են առավել հաճախ նախդիրների օգնությամբ:

*un livre de lecture (ընթերցանության գիրք), une assiette en argenti (արծաթե փսե):*

Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, հայերենին ծանոթ որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ բաժանումը Պրևիան իրականացնում է նախ նախադասությունը բաժանելով առանձին շարահյուսական խմբերի: Այնուհետև ելնելով վերը նշված խմբերի բառ-միջուկի խոսքիմասային պատկանելությունից առանձնացնում է խոսքիմասային խմբեր, որոնցում էլ անդամ-բառերն առանձնացնում է ըստ խոսքիմասային պատկանելության և/կամ շարահյուսական պաշտոնի:

Անհրաժեշտ է կրկին ընդգծել, որ ֆրանսերենում շարահյուսական և ձևաբանական սահմանները հայերենի նման հստակ չեն և գտնվում են, այսպես ասած, տարբեր հորիզոնականներում: Օրինակ՝ հոգը, ածականը, մյուս կողմից էլ որոշիչն ու բացահայտիչը կարող են դիտարկվել միևնույն հորիզոնականում՝ որպես գոյականական խմբի անդամներ:

Ժամանակակից քերականություններում, ինչպես նաև ինտերնետային գանազան հրատարակություններում ևս շարահյուսական կառույցների առանձնացման հիմքում խոսքիմասային խմբերն են: Եվ այսպես տարբեր ձեռնարկներում complement du nom-ը ներկայացվում է որպես «բառերի մի խումբ, որը լրացնում է գոյականին, և որը որոշակիացնում է գոյականական խմբի գլխավոր անդամի իմաստը: Ի տարբերություն հայերենի, որտեղ կարելի է առանձնացնել որոշիչը, իսկ հետո միայն այն դիտարկել գոյականական, ածականական կամ դերանվանական կապակցություններում (այսինքն՝ առանձնացվում է գոյականական անդամի լրացումը, որը կարող է լրացնել ոչ միայն գոյականին, այլև գոյականական կիրառություն ունեցող մյուս բոլոր բառերին), ֆրանսերենում տրամաբանորեն հակառակն է կատարվում. խոսքիմասային տարբեր կապակցություններում հանդիպում է միևնույն լրացումը. Ոչ թե շարահյուսական կայուն միավորը որպես այդպիսին գիտակցվում է և առանձնացվում խոսքիմասային տարբեր խմբերի ներսում, այլ ի հայտ է գալիս այդ խմբերի վերլուծության ընթացքում:

Այսպես, օրինակ, եթե խոսում ենք գոյականական խմբի մասին՝ նրա գլխավոր անդամի լրացումների շարքում թվելով նաև բացահայտիչը (apposition), այնուհետև միևնույն շարահյուսական միավորին հանդիպում ենք դերանվանական խումբը վերլուծելիս, այլևս խոսք չի կարող լինել գոյականական անդամների լրացումների մասին, քանի որ մի դեպքում այն գիտակցվում է որպես գոյականական, մյուս դեպքում դերանվանական խմբի մասը կազմող շարահյուսական միավոր:

Բացի այդ, ֆրանսերենի տարբեր դասագրքեր, ինտերնետային հրատարա-

կուրյուններ ուսումնասիրելիս՝ «Շարահյուսություն» բաժնում դժվար է գտնել «Գոյականական անդամի լրացումներ» (*complements du nom*) ենթավերնագիրը: Համախառն հանդիպում է *Groupe du nom*-ը (գոյականական խումբ): Բայց եթե բնականոն համարենք սա, և հայերենի ու ֆրանսերենի մոտեցումների տարբերության հիմքում եզրերի անվանումները դնենք միայն, ապա բնական է նաև ֆրանսերենում *Groupe du verbe* (բայական խումբ) ենթավերնագրի առկայությունը: Սակայն բայական լրացումների հարցում ֆրանսերենի քերականներն ունեն առավել հստակ մոտեցում, և առանձին ենթավերնագրերով որպես նախադասության շարահյուսական միավորներ են դիտարկվում խնդիրներն ու պարագաները: Այլ կերպ ասած՝ որոշ վերապահումներով այս ամենը մոտենում է Տենյերի տեսությանը, որտեղ նույնպես գոյականական անդամների լրացումները երկրորդական մյուս լրացումների՝ խնդիրների ու պարագաների հետ միևնույն հարթության մեջ չեն գտնվում:

Հայերենի գոյականական անդամների լրացումների բաժանմանը մոտ է խորհրդային լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչների կողմից ֆրանսերենի շարահյուսական միավորների վերլուծությունը:

Ե. Նիկոլսկայայի և Տ. Գոլդենբերգի՝ ֆրանսիական ֆակուլտետների ուսանողների համար նախատեսված «Ֆրանսերենի քերականություն» գրքում<sup>10</sup> որպես գոյականական լրացման ընդհանուր մի խումբ է առանձնացված *complément attributif*-ը (*определение — որոշչային լրացում*), որը նախադասության երկրորդական լրացում է, որը ցույց է տալիս առարկայի որակը, հատկանիշները: Լրացման բաժանումը կատարվում է նախադասության վերլուծության՝ խորհրդային լեզվաբանների մոտեցումներին համապատասխան: *Complément attributif*-ը, հեղինակների խոսքով, կարող է լրացնել գոյականի կամ դերանվանը և պատասխանել ինչպիսի՞ (quel? quelle? quels? quelle?) հարցին: Նիկոլսկայան և Գոլդենբերգը, որպես *complément attributif*-ի մի տարատեսակ, առանձնացնում են *apposition*-ը (բացահայտիչը), որը գոյականով արտահայտվող մի լրացում է, և որը բացահայտում է լրացյալին և բնութագրում այն:

Գոյականական անդամի լրացումների նմանատիպ վերլուծություն են ներկայացում նաև Պ. Ջասլավսկայան և Ի. Յումատովան, որոնք նույնպես երկու լրացում են առանձնացնում՝ *определение и приложение*<sup>11</sup>:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ հայերենում և ֆրանսերենում տարբեր է գոյականական անդամների լրացումների բաժանումը: Բայց, չնայած դրան՝ երկու լեզուներում էլ կան բառային այնպիսի խմբեր, որոնք նախադասության մեջ լրացնում են գոյականին կամ նրան համարժեք մեկ այլ խոսքիմասային միավորի, և երկու լեզուների տեսական աշխատություններում և դասագրքերում պարզապես տարբեր է դրանց ընկալումը և անվանումները:

### ՃԱՆՈՐՁԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեջբերումն ըստ Վ. Ա. Քոյանի, Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Երևան, 1976:

Մեջբերումն ըստ Ա. Н. Савченко, Сравнительная грамматика индоевропейских языков, Москва, 1974:

5. Jean Haudry, L'indo-europeen, Que sais-je?
6. Jean Haudry, L'indo-europeen, Que sais-je?
7. Այստեղ վիճելի է այն, թե արդյոք *զրեւու* բառը դրված է տրական հոլովում *զրեւու թղթեր* կապակցության մեջ: Այնուամենայնիվ, արտահայտած հարաբերությանը անապել շատ հակված է դիտարկվելու իբրև տրական:
8. Grammaire Larousse du français contemporain, Librairie Larousse, 1981.
9. Лосьен Теньер, Основы структурного синтаксиса, Москва, Прогресс, 1988.
10. Maurice Grevisse, Le bon usage, Duculot, 1980.
11. Ա. Նազարյանը «Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ուսերան-հայերեն ուսումնական բառարանում» (Եր., 1993) *déterminatif*-ը թարգմանել է որոշչային, իսկ *complément déterminatif*-ը՝ ինչպես *complément du nom*-ը՝ հատկացուցչի արժեքով գոյականի լրացում: Ընդ որում հատկացուցչային արժեքը շեշտվում է՝ ելնելով կառույցի ձևից՝ նախդրային կապակցումից:
12. E. K. Nikolskaia, T. Y. Goldenberg, Grammaire française, Moscou, 1982.
13. AR Nazaryan, Dictionnaire pratique français-russe-arménien des termes linguistiques, Erevan, 1993.
14. П.И. Заславская, И.Н. Юматова, Грамматика французского языка, изд. Ленинградского ун-та, Л., 1961.

### ՓՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Նազարյան, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ուսերան-հայերեն ուսումնական բառարան, Եր., 1993
2. Վ. Ա. Քոսյան, ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Երևան, 1976
3. П.И. Заславская, И.Н. Юматова, Грамматика французского языка, изд. Ленинградского ун-та, Л., 1961
4. А. Н. Савченко, Сравнительная грамматика индоевропейских языков, Москва, 1974
5. Л. Теньер, Основы структурного синтаксиса, Москва, Прогресс, 1988
6. Grammaire Larousse du français contemporain, Librairie Larousse, 1981
7. M. Grevisse, Le bon usage, Duculot, 1980
8. Jean Haudry, L'indo-europeen, Que sais-je?
9. AR Nazaryan, Dictionnaire pratique français-russe-arménien des termes linguistiques, Erevan, 1993
10. E. K. Nikolskaia, T. Y. Goldenberg, Grammaire française, Moscou, 1982

Տ. Գրիգորյան

### ДОПОЛНЕНИЯ СУЩЕСТВИТЕЛЬНОГО КАК ВТОРОСТЕПЕННЫЕ ЧЛЕНЫ ПРЕДЛОЖЕНИЯ В АРМЯНСКОМ И ФРАНЦУЗСКОМ ЯЗЫКАХ

Понятие дополнения существительного есть в обоих языках, но границы разные. В армянском языке две группы второстепенных членов предложения: дополнения существительного и глагола. Но это не говорит о том, что этот член „дополняет“ не существительное или глагол, а слова, имеющие функцию существительного или глагола. Во французском языке членение сделано в соответствии с частями речи. Существуют группы существительного, группы прилагательного и т.д. И анализ второстепенных членов предложения проводится внутри этих групп.

В армянском языке три группы дополнения существительного: определение, дополнение и приложение. Все связи выраженные этими группами во французском языке объединены в одной группе: *complements du nom* /или *complements attributifs*/, которое включает в себе еще и приложение.

*S. Grigorian*

## LES COMPLÉMENTS DU NOM COMME TERMES SECONDAIRES DE LA PROPOSITION EN ARMÉNIEN ET EN FRANÇAIS.

La notion des compléments du nom existe dans les deux langues, mais les frontières sont différentes. En arménien on a deux groupes de termes secondaires: compléments du nom et compléments du verbes. Cela ne veut pas dire que le terme „complete“ le verbe ou le nom, mais plutôt les mots ayant la fonction du verbe ou du nom. En français la division des termes de la proposition est souvent faite correspondant aux parties du discours. On a des groupes du nom, des groupes de l'adjectif, etc. Ce n'est que dans ces groupes-là qu'on analyse les termes secondaires.

En arménien il y a trois types de compléments du nom: l'épithète, le complément déterminatif exprimant la possession et l'apposition. Toutes les relations exprimées par ces trois groupes sont unies en français dans un seul groupe: compléments du nom ou compléments attributifs qui peut aussi inclure l'apposition.